նը (Arménie) կրտսեր դաշնակիցների մէջ ստորագրեց առաջինը... Ես ստո-
րագրեցի երեք անգամ 1) Թրքական դաշնագիրը. 2) Մեր երկրի փոքրամաս-
նութեանց վերաբերեալ դաշնագիրը Հայաստանի եւ մե

Գրական Էջ

ԱՌՈՂՁ ՍԿԻԶԲ

Կեանքը կը շարունակուի ցոյցիսկ դժոխքին մէջ, երբ ներկայ է ապրելու վճարակամութիւնը: Զանազան ժողովուրդներու հաւաքական փորձառութեամբ փաստուած այս հաստատումը, գոր հայ ժողովուրդը ապացուցած է տասնեակ ու տասնեակ անգամներ՝ արեւմտեան կրակներու փոթորիկներով հարուստ իր պատմութեամբ, նաեւ ճիշդ է արուեստներու պարագային:

Գրականութիւնը եւ ի մասնաւորի հայ գրականութիւնը ծաղկած ու հարստացած է ամէնէն անյոյս կացութիւններու մէջ, հալածանքին ու պարտադրեալ արգելքներու անշնչելի պայմաններուն ներքեւ կամ օտար անբարեկամ ստեղծուած վրայ, երբ հայ ստեղծագործ հանճարը յաւելեալ վճարակամութեամբ լարած է երկունքի իր շիղբերը եւ արձանագրած անսպասելի յաղթանակներ: Հայ գրականութեան գլուխ - գործոցներէն շատեր ծնունդ առած են անբարեկամ պայմաններու մէջ կամ ցուրտ եւ օտար հեռաւոր աշխարհներու մէկ անկիւնը: Եւ ի հեռուկա սուլթանի ու ցարի ամէնօրեայ սարսափին եւ հայ ստեղծագործ մտքին սաւառուումը կաշկանդել նկրտող այլեւայլ արգելքներուն, հայ գրողը միշտ յաջողած է վեր բարձրանալ իր դժամ երկարատեւ գիրքին եւ արձանագրած իրերայաջորդ յաղթանակներ՝ Ամսօրնամէն մինչեւ Մոսկուա եւ Թիֆլիսէն մինչեւ Վենետիկ եւ այլուր:

Գրականութիւնը շարունակած է իր վերածաղկեալ ուղին եւ նոր անունները յաւելեալ փայլը ու հմայք պարգեւած են անոր: Թարմ արիւնը բոլորովին տարբեր կենսունակութեամբ մը երիտասարդացուցած է անոր փարթամ մարմինը եւ հայ ստեղծագործ հանճարին դիմաց բացած նոր մտահորիզոններ:

Նորը եկած է մի շտ դժուարին պայմաններու մէջ եւ իր ամբողջական խնդրակառուութեամբ ու կենսունակ ուժով յաջողած է դուրս գալ ծանօթ կաղապարներէն՝ արտասանելու համար իր նոր խօսքը:

Յետ-անկախացումէն անցումային հանգրուանին, երբ արեւմտեան ալլասերիչ բարբերն ու սպառնողական մշակոյթի ալիքները աչքն ու ծախեան խուժեցին Հայաստան, երբ առեւտրական մտածողութիւնը լայն հող շահեցաւ եւ հայ գիրն ու գոյնը, շարժումն ու մեղեդին գրկուեցան պետական հովանաւորութեան ազդեցութեան, նոյնիսկ նման անբաղձի պայմաններու մէջ, իրենց գոյամարտը մղող խումբ մը հայրենի ճշմարիտ գրագետներուն կողքին ծլան նոր ընծիւղներ ու թարմ ծիւրեր բողբոջեցան:

Արմինէ Աբրահամեան, Մհեր Բեյլերեան, Մարիամ Ասրիեան, Գեորգ Թումանեան, Աստղիկ Սիմոնեան, Վահան Անդրեասեան, Լիլիթ եւ ընկերներ եթէ հայրենի գրականութեան հաշուոյն տուին շոշափելի խոստումը ջահերքի շարունակման, սփռնութեան մեր հայագիտութեան երբեք անմասն չմնացին այս գեղարուեստական խրատեանքէն: Հակառակ սփռնութեան ծանր պայմաններուն, հակառակ գրական մթնոլորտի արձանագրած բացայայտ ցանցիցին եւ գրական - մշակութային կարգ մը բեմերու խամրումին, նոր ծիւրեր յանդգնութեան պոռթկացին եւ ապացուցեցին խօսքով ու գործով, որ արեւմտահայ մշակոյթի եւ գրականութեան սիրտը պիտի շարունակէ բարատեւ աշխուժ ու առողջ, այնքան ատեն որ կենդանի է ինք՝ ժողովուրդը:

Սուրիոյ, Քանաքեպի, Լիբանանի, Արժանքի մէջ եւ հեռաւոր այլ ափերու վրայ հետզհետեւ աւելի պայծառօրէն շողացող այդ նոր տղաքը արժանի են ամբողջական ու շարունակական: Յակոբ Նալպանտ, Յարութիւն Վարդանեան, Տիգրան Գաբրիելեան, Նանոր Ինճեկեան, Սուրէն Զեքիեան, Սագօ Արեւան, Լեւոն Արտազեան, Սալբի Քրիստեան, Սոնիա Քրիստեան, Խաչիկ Տէտեան եւ մնացեալ նոր անունները այս սերունդին այն պարտաւոր փաստն են, որ առողջ է սերնդափոխութիւնը եւ նորանունը ջահակիրները նոյն անհնգական խանդավառութեամբ ու վերակամութեամբ պիտի շարունակեն արեւմտահայ գրականութեան ջահերքը:

Քրոջի սինակներով հեռաւոր Քանաքեպի եւ Սուրիոյ երկու նոր անուն հիւրընկալելով, պատահանը լայն կը բացանք սերունդին առջեւ, որուն շնորհալի այլ ներկայացուցիչներուն հետ ժամադրուելու առիթներ պիտի չպակսին մեզի:

Բարի երբ եւ բեղուն ապագայ արեւմտահայ գրականութեան նոր ընծիւղներուն:

Ս. ԿԻՐԱԿՈՍԵԱՆ

ԱՄԱՌՆԱՅԻՆ ԱՆՁՐԵՒ...

Աննան նեղ, սեւ տարած մը հագուած էր, որ իր մարմնին գեղեցկութիւնը աւելի ցցուն կը դարձնէր, իսկ վերի մասը սեւ գիծերով մոխրագոյն պլուզ մը: Մազերը ետեւ հաւաքած էր եւ դէմքը առանց չպարի շատ թարմ կ'երեւէր: Համարները ցի գինք եւ ըսի, որ շատ անուշիկ է:

Իր տունը քաղաքի կեդրոնին մօտ էր: Հիմա, Շարաթ օրով Տան Վելին խնդուած կ'ըլլար, ուստի՝ որոշեցի քաղաքին մէջէն երթալ: Տիւփունէն արեւմուտք դարձայ, քեցինք մինչեւ Իզլինկլըն: Ճամբան անցանք Թորոնթոյի իտալական եւ արեւելեան եւրոպական շրջաններէն: Գացած ատեննիս կը խօսէինք Քանաքեպի մասին ընդհանրապէս եւ Թորոնթոյի մասին:

- Հոս չեկած, բնաւ մտքէս չէր անցնել, որ այս հսկայական երկրին մէջ տունները իրարու այսքան մօտիկ պիտի ըլլային, կարմանալի է: Իրապէս չես կրնար պատկերացնել այս երկրին մեծութիւնը, հազար քիլոմետր գնալ՝ դեռ Օնթարիոյի մէջ ես: Ես անգամ մը Թանտըր Պէյ ըսուած քաղաքը գացի, ասկէ 800 քիլոմետր արեւմուտք, ճամբան քանի մը պզտիկ քաղաքներ եւ գիւղեր կային, մնացեալը ամայութիւն էր: Հրաշալի անտառներ, գետեր, լիճեր, ջրվէժներ եւ բնական գեղեցկութիւն: Չես կրնար երեւակայել, թէ ի՞նչ հսկայ է այս երկիրը: Բոլոր մեծ քաղաքները Ամերիկայի սահմանին մօտն են եւ տուններն այլ հաւոյններու պէս իրարու մէջ մտած: Մա՛նաւանդ այս թաղամասերը շատ թափթփած են: Դուռն կը սպասէի՞ր, որ Թորոնթոն այսպէս տեղ մը պիտի ըլլար:

- Բնաւ գաղափար չունէի,- ըսաւ,- ես ալ աւելի գեղեցիկ քաղաք մը կ'ակնկալէի:

- Դեռ հիմա լաւ է, իմ եկած ատենս գիւղի պէս բան մըն էր, հսկայ գիւղ մը: - Դուռն ինչո՞ւ եկար: Քու եկած ատենդ Պէյքուէթը լաւ էր, չէ՞:

- Հա, կ'ուր չկար: Մի խնդար, բայց ես «ինքզինքս գտնելու համար» եկայ, բայց այլ փորձառութիւններ գրեթէ ընկճեց գիտ: Որովհետեւ ամէնէն վտանգաւոր թշնամիդ քու մէջդ է, որ կ'ապրի: Բախտաւոր են այն մարդիկը, որոնք անոր հետ առանց ճակատելու կրնան իրենց կեանքը ապրիլ: Երբ որ դժմ-յանդիման կողմ գաս դուռն քեզի հետ, կը զգաս ամէնէն ճանաչման պայքարը: Այս պայքարէն կը յաղկիս դուրս գալ միայն այն ատեն, երբ կը սորվիս ապրիլ ներսի թշնամիդ հետ: Ինձմէ գրեթէ երեք տարի առաւ այս փորձառութիւնը:

- Ամէն եկող դժուարութիւն կ'ունենայ վարժուելու:

- Ճիշդ ես, բայց ինձի հետ հակառակը եղաւ: Երբ որ նոր եկայ, գրեթէ տարի մը բուրիսի մտայնութեան մէջ էի, ամէն ինչ ինտուիթիւն էր: Վերջը, երբ կեանքս ուռիքի մէջ մտաւ, սկսայ հարցեր տալ. «Ի՞նչ կ'ընեմ կոր հոս», «Ի՞նչ է կեանքիս նպատակը», եւ այլն: Ներաշխարհիս մէջ մտայնացումս որոշեցի եւ առանց օգնականի: Քեզի բան մը ըսե՛մ՝, ատիկա ամառը քու գործն է, քիչ մնաց որ հաւասարակշռութիւնս կորսնցնեմ:

Գրեթէ երեք տարի, ինձի կը թուէր, որ անդո՞նդին ծայրը կ'ապրէի: Եւ ամէնէն իրոնիք բանը այն է, որ իմ այդ վիճակիս մէջ ձանձթ անուճով աղջկան մը հետ կ'ապրէի: Այս աղջիկը շաբաթը երկու անգամ հոգեբուի կ'երթար գարմանումի համար, եւ գիշերները անկողնին մէջ ինձի փաթեթուած կ'ըսէր. «Կը նախանձիմ քեզի, դուռն որքան զօրաւոր ես, ժայռի մը պէս ամուր...»: Խնդալէն պիտի մարէի, ես որ անձկութեան մէջ կ'ապրէի գրեթէ ամէն օր, չէի գիտեր, թէ ի՞նչ պիտի ընէի, արդէն երեսուն տարեկան եղած էի եւ նոր սկսած էի համալսարան երթալ, այն ալ իրիկունները, ով գիտէ քանի՞ տարիէն վկայական մը պիտի առնէի: Օր մը չէր անցնէր առանց դրամական նեղութեան, եւ այս քանտոցի աղջիկը, որ լեզուի դժուարութիւն չունէր, Անկլո-Սաքսոն անուն ունէր, հայրը հսկայ կարուածի մը տէր, համալսարանը արդէն աւարտած էր, իր ծնած երկրին մէջ կ'ապրէր: շաբաթը երկու անգամ հոգեբուի պէտք է երթար...: Կամաց-կամաց համոզեցի զինք եւ դադարեցուց հոգեբուի երթալը: Աննան հետաքրքրուած մտիկ կ'ընէր այս մենախօսութիւնը եւ տեղ-տեղ զվտով իր համաձայնութիւնը կը յայտնէր: Շարունակեցի խօսիլ այնպէս, որ կարծես ինք նոր Քանաքեպի եկած էր եւ ես զինք կը ծանօթացնէի տեղական կեանքին:

- Ես երբ որ հոս եկայ, ուզեցի քանաքեպի ըլլալ: Իրենց նմանի, իրենց պէս (Հատուած)

ապրիլ, բայց չյաջողեցայ: Այս ձանձթին հետ ապրած ատենս քանի՞-քանի՞ անգամներ կ'իրակի առաւօտ հայկական եկեղեցի գացի (այն ատեն միակ մէկ հատ կար), թէ եւ Աստուծոյ չէի հաւատար, սակայն այդ կապոյտ աչքերով կ'ընդ անկողնի պաղ կը գտնէի, ատենը մէյ մը կ'երթայի ազգակիցներս տեսնելու եւ իմ մէջս հետզհետէ խորացող պարապութիւնը փարատելու: Սակայն կը զգայի, որ հոս ալ չէի պատկաներ: Որովհետեւ անոնք կ'ըզիացած էին իրենց շրջապատէն եւ գաւնատացիներուն հետ ընկերային յարաբերութիւն չէին մշակեր: Այսպէս կը տարուբերէի երկու աշխարհներու միջեւ՝ առանց մէկուն կամ միւսին լրիւ պատկանելու:

Այն ատեն Թորոնթոյի համալսարանին մէջ կ'աշխատէի եւ անգամ մը, երբ այս մասին խօսեցայ գործատեղիին մէջ, բնաւ չուճարանի վերակացուս, որ կենսաբան էր, ըսաւ, որ կենդանական աշխարհին մէջ երկու տարբեր ցեղերէ սերած կենդանին աւելի չարքաշ եւ աւելի դժուար յարմարող կ'ըլլար:

«Ուրեմն դուռն հարց պէտք չէ ունենաս», - ըսաւ, ճիշդ գիտնականի մը պէս, գոր միայն շօշափելի տուեալները կը հետաքրքրեն:

«Վստահ եմ, որ ձեր մտքէն չէ անցած, որ այս նոր կենդանին կրնայ ուրախ ըլլալ, հակառակ իր նոր կարողութիւններուն», - պատասխանեցի ես: Եւ աւելցուցի արեւելքիցի յատուկ անտիպ տրամաբանութիւնով, որ սաստիկ կը ջղայնացընէ քանաքեպիները:

«Ամենայնդէպս, ձեզի համար ամէն ինչ միեւնոյնն է, դուք կրնաք Թորոնթօ ապրիլ, բայց Պոսթըրի «Հաքի» խումբին համակիրը ըլլալ, ինչ որ ես չեմ կրնար ըմբռնել, իմ հասկացողութեան անդին է ատիկա»:

Ան պատասխանեց.

- Բայց կրնայ ըլլալ, որ Պոսթըրի «Հաքի» խումբը աւելի լաւ խումբ մըն է, անոր մէջ տարօրինակ բան չկայ:

«Ահա՛, յաւ ըլլալով՝ են համար պիտի սիրես, թէ քու կը ըլլալուն համար: Թէ եւ Թորոնթօյի խումբը կրնայ քեզ թոքափոխի դուռն տանիլ քսան տարի բաժակ չհահելով, ես կը նախընտրեմ բնաւ «Հաքի» չգիտել, քան թէ աւելի յաջող խումբի մը համակիրը դառնալ, Հաքիի խումբը փոխողին համար կ'իյն, ընտանիք փոխել ի՞նչ է որ», - ըսի ես:

«Հէ՛յ-հէ՛յ», չէ՛ս կարծեր, որ չափը անցուցեր քիչ մը...»:

Չէի կրնար հասկնալ իրենց բնածին չհարգութիւնը, հեռու կրնային մնալ եւ հարցերուն մտքով մօտենալ, ասիկա պարզ ժամանակ տանելի էր, բայց տագնապի կամ անձկութեան պահերուն սարսափի մէջ կը ձգէր գիտ: Ամբողջովին օտար եւ անհարգող կը զգայի ինքզինքս, եւ տարբերային առանձնութիւն մը կը զգայի, որուն դարձմանը չկար: Կարծես ուրիշ մոլորակի մը վրայ ինկած էի, ուր ոչ մէկ բան ընտանի էր ինձի համար, ոչ մէկ տեղ ապահով կրնայի զգալ:

Աննան ինձի կը նայէր փափուկ նայածութեամբ:

- Կը ներես այսքան շատ խօսելուս,- ըսի,- չեմ գիտեր վրաս ի՞նչ եկած է:

- Վնաս չունի, հետաքրքրական է,- ըսաւ,- դուռն երբ եկար՝ ամէն ինչ տարբեր էր, չէ՞:

- Ատիկա չէ միայն, երբ ընտանիքով կու գաս բոլորովին տարբեր է, կապեր եւ պարտաւորութիւններ ունիս, կապերը քեզի զգացական որոշ ապահովութիւն մը կու տան, իսկ պարտաւորութիւնները չեն թողուր, որ չափազանցութեան երթաս: Ինչ որ է, ասիկա երկար նիւթ մըն է:

- Անոր համար հաւանաբար աւելի լաւ է հայկական շրջանակի մէջ մնալ:

- Այո, աւելի ապահով է, բայց ես կ'ուզէի մուտք գործել տեղական կեանքին մէջ ալ, իրենց ճաշերը ուտել, իրենց ժամանցներուն մասնակցել, իրենց մտածելակերպը իւրացնել: Պէյքուէթի մէջ կ'ապրէինք բոլորովին կ'ըզիացած հայկական շրջանակի մէջ, եւ ես արաբերէն խօսիլ գրեթէ չէի գիտեր, բնաւ տեղացիներուն հետ չէի շաղկուած: Չուզեցի նոյն սխալը հոս կրկնել: Բայց հակառակ իմ ճիգերուս, քանաքեպիներուն հետ ալ չկարողացայ շաղկուիլ, իմ ամէնէն մօտիկ ընկերներս ամէնէն ալ ուրիշ գաղթականներ եղած են, հրեայ, չին, ուրբանացի, եւ այլն:

ՍՈՒՐԵՆ ԶԷՔԻՃԵԱՆ

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ

ԳԱՐՏՆԻ ԳԱՆՉԵՐ...

Ծովեզերք չիսանող ալիքի մը անան խորանայ ալբերուն անպարտոյ այս երկինքին սակ ուր կոնակիս վրայ փռուելով ըլլալ նար իմ իսկական հեքիաթիս որ բարչրայայն շառաչանրո մէջէն կ'ընկղմի գաղտնի գանչերովս ծանրացած...

ՃՈՎԱԾՈՅ...

Խօյաշատաջ ծովը փրփուներս կ'արագացնէ

Համագրու նայումը քով ալիքներ կ'ընթացան ու կը փրցան կոնակները անդ հագուարիս որ կը սահի կոնակիս վրայէն կը զգամ ազատութիւնը մարմնիս վրայ սաւառող պաղ հովին ուր անող կը միանան ծովա-սարիճանին ու կ'իջնան վար ներքաններս լիզող ծովաւզներուն վրայէն դէպի ինքնամոռացութեան ծոցը...

ՉԵՆՆՈՅ...

Կախարդներուն գոյնգոյն չեռնոցները հաւաքած նշաններով ու թիւերով կ'որոշեն թէ ինչպէս քեզ պիտի կախարդեն

Մերկ մարները կը մսին իսկ իրենք փարսուկ-փարսուկ իրենց անյայտ մարներու վրայ կը պարեն...

Մարները իրարու հիստուած կը շօշափեն զիրար սակայն անոնք չեռնոցներէն դուրս ելած մագիլներէն ափերու վրայ նոր գիծեր կը գծեն ու մարները կը ծակեն կարմիր չեռնոցով...

ԹՈՒՌՅԻԿ

Ուրուսպարկերը մարիս մէջ բոռցիկի մը պէս կը շրջի մարտիրոսներս վրայ պարտու կու գայ ու իր գորշ գոյները իրար խառնելով ... աչքերս անոնց մէջ կը շլմորիս

Կ'ուզեմ իրեն հասնիլ գունճ մարիս մէջ զիմք ղեկավարել կամ ալ բռնու մը ըլլալ ու իր հեքի ամպերուն մէջ կորսուիլ քաղաքին բոլոր շէնքերէն բարչրանալ

Կ'ուզեմ մոռնալ, մոռնալ ամէն ինչ բայց երբ որ փորձեմ բոռցիկի մարիս դուրս բոցնել հովը միշտ ալ կ'անհետանայ երկինքէն...

ՄՈՐԹԱԿԱԹԻԼ

Աշտանակ մըն էս դուն իսկ էս այդ մտը որ ափերուդ մէջ էմ դրուած: Մազերս կրակի մը պէս կը վառին որպէսզի մոռնայն մարմինս հալի ու կարիլ առ կարիլ աշտանակէն հոսի

Ամէն կարկերտս կը կարկերտ անա... երազներս, յիշարականներս մինչեւ որ մարմինս ամբողջ ափերուդ մէջ հաւարոյի ու պարտոյս միայն վառած մնայ

Չեղբերդ սկսան այրիլ ու շղիմանալ հաւարած փաթ մորթակաթիլներուս Դուն քեզ ազատելու համար ... անդմեղի չեղբերդ իրարու ու պարտոյս անկարողացի

Մոմ մըն էս իսկ դուն այդ աշտանակը ար զիս ափերուն մէջ քաղած է...

ՆԱՆՈՐ ԻՆՃԵԿԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒԱԿԱՆ ԱՐՏԵՍԱՏԱԳԻՏՈՒԹԻՒՆ

ՀԱՄԱԿԱՐԳԻԶ

ՀԱՄԱՑԱՆՑ

ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԱՇԽԱՐՀ



ՀԱՄԱԿԱՐԳԻԶԻՆ ՓԱՆՐԵՐԸ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ, ԹԷ ՊԱՏՈՒՏԱՍ

Համակարգչային ժառանգությունը սարսափ կ'ազդեն համակարգիչ օգտագործողներուն վրայ՝ նախ եւ առաջ իրենց անունին համար: «Փահր» (VIRUS, լատիներէնով կը նշանակէ «թունաւոր հեղուկ») բառը ենթական կը յիշեցնէ էպիլոյսի եւ ՍԱՐՍԻ նման ժառանգութիւնները:

Այսօրուան Համակարգչային ժառանգութեան 1980-ականներուն, երբ համակարգիչներ սկսան ներկայութիւն գտնուել գրասենեակներու, տուններու եւ համալսարաններու մէջ: Ահա այս ժամանակաշրջանին է, որ միաժամանակ վնասարար եւ ստեղծագործ միտքեր պարարտ հող գտան իրենց «արուեստի գործ»երը արձակելու: Երեւան ելան «Տրոյապոլի Զի» ժառանգութեան, որոնք ծագումով իրեն համակարգչային «օրինաւոր» ծրագրիչներ, կը տեղադրուէին համակարգիչներու մէջ եւ անկէ տեղեկութիւններ կը ջնջէին:


Այս ժառանգութեան փոքր ծրագրիչներ էին, որ դիւրաւ կը բաւէին ֆլոպի տիսքետի մէջ: Անոնք պատրաստուած էին այնպիսի ձեւով մը, որ տուեալ թուականի եւ ժամու գործի անցնելով համակարգիչը աւերէին:

Ժամանակի ընթացքին, ժառանգութեան պատրաստողները սորվեցան նորոնոր ձեւեր եւ յաջողեցան ստեղծել «Պուլ Սեքթըր» ժառանգութեան, որոնք կը գործէին անմիջապէս որ ֆլոպի տիսքետը օգտագործուէր կամ համակարգիչը աշխատողէր:



Այսօր, երբ «Տրոյապոլի Զի» եւ «Պուլ Սեքթըր» ժառանգութեան վնասը համեմատաբար չափաւելի նուազ է՝ տրուած ըլլալով, որ օֆֆիսէյթիսի սխալները աւելի եւս սպասուած են քան երբեք, իսկապէս նոյապիսի կը հանդիսանան ե-նամակ տարածուող «որդ» ժառանգութեան, որոնք կարողութիւնը ունին կայքէջերէն արագութեամբ իրենք-զիրենք բազմապատկելու եւ տարածելու:

Ե-նամակ ժառանգութեան տարածուող կը հասնի իբրեւ «ըթէյձընթ», որ բացուելու պարագային կը վարակէ համակարգիչը: Այս ժառանգութեան վնասին տարողութիւնը կը տարբերի: Ամէնէն վնասակարները, ինչպէս «Պատթըն» ժառանգութեան, համակարգիչին մէջ կ'արձանագրեն «քիւլըր» ծրագրիչներ եւ ծածկագրիչներ ու քրետիթ քարտի թիւեր կը գողնան: Ե-նամակի ժառանգութեան կարողութիւնը ունին իրենց վնասակար համակարգիչին մէջ ամբարտուած ե-նամակի հասցէներուն իրենցմէ օրինակ մը ուղարկել: Այս երեւոյթը խիստ վնասակար է, որովհետեւ ե-նամակը ստացողը կը տեսնէ, թէ իր բարեկամն է զայն ուղարկողը, եւ վստահ ըլլալով, որ ան ժառանգութեան ուղարկած պիտի չըլլայ, կը բանայ «ըթէյձընթ»:



Վերջին տարիներուն, համակարգչային ժառանգութեան պատրաստողներ նաեւ հոգեբանութիւն ներարկած են իրենց արուեստին մէջ: Այսպէս, օրինակ՝ ժառանգութեան վնասակար ե-նամակները կ'օժտուին քաղցրակաշտութիւն ունեցող խորագրիչներով, որպէսզի ենթական մղուած ունենայ զանոնք բանալու:

Համակարգչային ժառանգութեան գործը յաճախ կը ներկայացուին իրեն ընկերային կեանք չունեցող պատանիներ, որոնք զիշերները կը լուսնեն համակարգիչին դիմաց՝ ժառանգութեան քոտեր պատրաստելով: Սակայն, խորքին մէջ, ժառանգութեան պատրաստողներ յաճախ կ'ըլլան սովորական կեանք վարող պատանիներ եւ երիտասարդներ:

«Ժառանգութեան պատրաստողներուն մեծամասնութիւնը հաւասարակշռուած պատանիներ են, որոնք ունին ընկերային յարաբերութիւններ եւ իրենց պատրաստած ժառանգութեան վնաս հասցնել չէ որ կ'ուզեն», կ'ըսէ համակարգչային ժառանգութեան պատրաստողներու «դիմագիծ»ը Ռուս մասսիքոլ մասնագէտ մը՝ Սառա Կորտնը:

Անոնցմէ շատեր համակարգչային ծրագրիչներ պատրաստելու մարմաղով տարուած պատանիներ են, որոնք կ'ուզեն իրենց ծրագրիչով գերազանցել հակաժառանգութեան ծրագրիչներ պատրաստող մասնագէտները եւ Փի-էլ-Տի-ներ ունեցող համակարգչագէտներ տապալած ըլլալու գոհունակութիւնը զգալ:

Աւելին, համակարգչային ժառանգութեան ծրագրիչներ ճանաչում կը գտնեն իրենց «պաշտօնակիցներու» շրջանակին մէջ, եւ սիրալիր կերպով իրենց պատրաստած քոտերը կը բաժնեկցին:

Ինչպէս ըլլան համակարգչային ժառանգութեան պատրաստողներուն զրգապատճառները եւ նպատակները, մէկ բան յստակ է. անոնք պատճառ կը դառնան, որ տարեկան միլիոնաւոր տղարներ ծախսուին՝ ժառանգութեան դէմ պայքարելու եւ անոնց աւթած վնասները նորոգելու համար:

ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՓԱՆՐԵՐՈՒ ՀԱԿԻՐՃ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Համակարգչային ժառանգութեան ընթացքին արձանագրած են հակապահանջարկները եւ վնասի տարողութիւնը բազմապատկելու մեծ դարձած է: Ստորեւ կը ներկայացնենք համակարգչային ժառանգութեան պատմութեան «անկիւնաքար»երը:

● **ՀՈԿՏԵՄԲԵՐ 1987**
Փի. Սի-ի համար պատրաստուած համակարգչային առաջին ժառանգութեան կը գտնուի Տէլըուէր համալսարանի համակարգիչներուն մէջ: «Պրէյն վայրը» կոչուող այս վնասակար քոտը, պատրաստուած՝ փաթեթաւոր մէջ, ֆլոպի տիսքետի միջոցով կը հաստատուի հարտ-տիսքետի վրայ:

● **ՕԳՈՍՏՈՍ 1995**
Երեւան կ'ելլէ առաջին մաքր-վայրը՝ «Բոնսէֆթ»: Այս ժառանգութեան նախատիպ մը կը հանդիսանայ հետագայ ժառանգութեան: Ան «Ուրբտ» ֆայլեր վարակելով կը տարածուի:

● **ՄԱՐՏ 1999**
Համակարգչային ժառանգութեան «ոսկեմատեան»ին մէջ իր անունը կ'արձանագրէ «Մելիսա» ժառանգութեան, որ միաժամանակ «մաքր» եւ «որդ» ժառանգութեան յատկութիւններով օժտուած է եւ աւեր կը գործէ ընկերութիւններու ե-նամակի դրուածներուն մէջ:

● **ՄԱՅԻՍ 2000**
«Միլոյ նամակ» ժառանգութեան կը սկսի տարածուիլ աշխարհով մէկ: Հոգեբանութեան եւ համակարգչային գիտութիւններու միաձուլումը հանդիսացող այս ժառանգութեան տարածուի ե-նամակներու միջոցով, որոնք «քեզ կը սիրեն» խորագրով ունին: Սէր գտնելու ուրախութեամբ տարուածները կը բանան ե-նամակը եւ սիրով փոխարէն... աւեր կը գտնեն:

● **ՅՈՒՆԻՍ 2000**
Բջիջային հեռաձայններ հարուածող առաջին ժառանգութեան կը բացայայտուի: Ե-նամակներու միջոցով տարածուող այս ժառանգութեան հեռաձայններու կ'ուղարկէ անվնաս, սակայն նեղացուցիչ կարճ պատմութիւններ:



Գամներ (էս-էմ-էս):


● **ՍԵՊՏԵՄԲԵՐ 2000**
Ափի համակարգիչներ (Փալմ) հարուածող առաջին ժառանգութեան երեւան կ'ելլէ:

● **ՆՈՅԵՄԲԵՐ 2001**
«Պատթըն» որդը կ'օգտագործէ «Աուլուր» եւ «Աուլուր Էքսփրէս» համակարգչային ծրագրիչներ մէջ թուանիշներ՝ ծածկագրիչներ (password) գողնալով:

● **ՆՅՈՒՆ 2002**
«Մեքս Լէպ» համակարգչային անվտանգութեան ընկերութիւնը կը յայտարարէ, թէ «Քլէյ-է-է» ժառանգութեան ամէնէն վնասարար ժառանգութեան է: «Քլէյ-է-է» «յաջողութիւնը» կը կայանայ այն փաստի մէջ, որ ժառանգութեան տարածուի տարբեր ծրագրիչներով:

ԱՐՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

«ԲԷՆԸՆ ՓԱՌԻԸՐ ՇԱԹ ԺԻ. 5»




Թուագրային լուսանկարչական սարքերու ճարտարաւեստին մէջ 5 մէկափքսէլ յստակութեամբ քամբարները այսօրուան առաջնայինը կը նկատուին:

Հսկաներու այս աշխարհին մէջ ամրոջ ցամաքամաս մը կը պատկանի Քէնընի, որուն «Փաուր Շաթ ԺԻ. 5»-ը, 5 մէկափքսէլ յստակութեան կողքին, օժտուած է 4 X «օֆթիքըլ զուժ»ով, 1,8 ինչ էլ.Սի.Տի. պաստառով եւ լուսանկարչութեան 12 տարբեր դրուածներով:

Շուրջ 1200 տոլար արժողութեամբ այս թուագրային քամբարային մասին տեղեկութիւններ կարելի է գտնել www.canon.co.uk/digitalcameras հասցեով կայքին մէջ:

«ԹԻ. ՄՈՊԱՅԼ ՍԱՅՏՔԻՔ»


«Եթէ կրնաս փոքրացիր, բայց գիտես ինչքան», հարց պիտի տար թէ քեզ ես եթէ տեսնէր այսօրուան արհեստագիտութեան մէջ սարքերու փոքրացումին ընթացքը: Վերջապէս, հագիւ հաշտուած գիրկի համակարգիչին հետ (չէֆթոֆի) արդէն շուկան ողողուած է ափի մը մէջ բաւող համակարգիչներով:



Գերփոքր համակարգիչներու այս փաղանգին պատկանող սարք մըն է «ԹԻ. Մոպայլ Սայտքէք»ը, որ միաժամանակ բջիջային հեռաձայն մըն է եւ համացանցի միջոցով զրոյց կատարելու առիթ ընձեռող սարք «QWERTY» ստեղծարարով եւ 65,000 երանգներ ունեցող պաստառով:

Սարքին մասին յաւելեալ տեղեկութիւններ տրամադրուած են www.t-mobile.com հասցեով կայքին մէջ:

ԱԼՕ, ԴԼՓԻՆՆԵՐՈՒՆ ՀԵՏ ԿՐՆԱՄ ԽՕՍԻԼ ՀԱՄԻՔ



Աշխարհի տարածքին բջիջային հեռաձայններ օգտագործողները շուտով առիթը պիտի ունենան զլիփնեւորուն հետ հաղորդակցութեան մէջ մտնելու: Արդարեւ, իրանտայի արեւմտեան ծովեզերքին վրայ գտնուող զլիփնեւորուն յատուկ կեդրոնի մը եւ անթէլ հաղորդակցութեան հսկայ՝ բրիտանական «Վոտաֆոն» ընկերութեան գործակալութեամբ ստեղծման ընթացքի մէջ է դրուած մը, որ առիթը պիտի ընձեռէ զլիփնեւորուն ձայնները հեռասփռելու:

«Կրնաս հեռաձայնել եւ լսել զլիփնեւորուն ձայնները երբ ինքնաշարժի մէջ նստած ես Տապիլի խճողուած մէկ փողոցը», կը բացատրէ ծովային բնագէտ Սայմը Պէրո:

Պատրաստեց՝ ԽԱԶԻԿ ՍՈՒՐԱՏԵԱՆ

Մանկապատանեկան

ԾՈՎԸ ՄԱՔՈՒՐ ՊԱՀԵՆՔ

Երկրագունդի ծովերուն առողջապահական վիճակը շատ փայլուն չէ: Ասոր պատճառը մեծ մասամբ մարդ արարածն է: Աճ ծովուն մեծ վնասներ կը հասցնէ, օրինակ՝ անհաշիւ ձկնաբեր ամեն տեսակի ձուկեր որսալով, կամ տեսակաւոր աղբեր քափելով անոր ջուրերուն մէջ. առանց մոռնալու նաեւ ապակաճող քարիւղը, որ կը քափի նաեւ արկածի մը պատճառով...



Ծովային ապականու մին առաջին գլխաւոր պատճառը ցամաքէն եկած աղբերն են. թոններով քիմիական, երկրագործական կամ գործարաններէն թափած աղբեր: Ասոնցմէ ամէնէն վնասակարներն են ճիւրքաքները եւ ֆոսֆատները, որոնք գոյութիւն ունին կարգ մը ճարտարարտուածական կամ տնային (լուսաքիւններ) աղբերուն մէջ, սակայն յատկապէս երկրագործական աղբերուն մէջ: Անձրեւին ջուրերը այս աղտոտութիւնները կը տանին մինչեւ դեռեւոր, որոնք իրենց կարգին գանձը կը թափեն... Ծովերուն մէջ:

Այս ապականող նիւթերը կը նպաստեն աճուածին կարգ մը մանր ջրախոտերու, որոնք կը սպառեն ջուրին մէջ թթուածինը եւ պատճառ կը դառնան բոյսերու կամ կենդանիներու տեսակներու շնչահեղձութեան: Կարգ մը ուրիշ անտեսանելի քիմիական ապականող նիւթեր կը վարակեն նաեւ ծովային կենսոլորտը, ծովուն մէջ ապրող կենդանիները, եւ ուղղակիօրէն կը վնասեն մարդոց, որոնք այդ կենդանիներէն կ'ուտեն: Անշուշտ, չմոռնանք նաեւ կոյուղիներէն ուղղակիօրէն ծովուն մէջ թափող ջուրերը...

Սակայն, ամէնէն շատ

վնաս հասցնողը կերպարկայն է: Ամէն տարի կերպարկայն տոպրակները կը խեղդեն հազարաւոր ծովային կրիաներ եւ ստնաւոր կենդանիներ: Ինչպէս նաեւ՝ թռչունները, որոնք տոպրակները ծովամայրեր կարծելով կ'ուզեն որսալ զանոնք:

Ի՞նչ ԸՆԵՆ

Գիտէ՞՞ր, թէ միայն մեծ քարիւղատար նաւերը չեն, որ ծովը կ'ապականեն, այլ նաեւ՝ արծաթալուրջները ծովափը անցընողները: Հետեւաբար, երբ մեծ ծով երթանք, փորձենք յարգել եւ պահպանել այդ կենսոլորտը:

Երբ ծովի գերբար պոնպոն կ'ուտես, շաքարը հինգ վարկեանէն կը հալի, սակայն կը մնայ տոպրակը: Չես գիտեր ինչ ընել: Կը մտածես զայն ծովը նետել. ոչ մէկը պիտի տեսնէ այդ թափանցիկ առարկան... Սխալ: Վստահաբար ոչ շատ հեռու աղբաման մը գոյութիւն ունի:

Կ'ուզես ծնողներուդ կամ ընկերներուդ կատակ մը ընել, եւ անոնց կերպընկալէ ծովու մուսնակները աւազին մէջ պահել: Եթէ դուն ետքը զանոնք չգտնես, անոնք պիտի մնան ծովափին վրայ, եւ մակընթացութիւնը անոնց ծովուն մէջ պիտի քշէ տանի:

Երբ կը լողաս, յարգէ ջուրին մէջ ապահովութեան սահմանները: Այս ձեւով, ծովային շարժանիքի մը արկածէ մը վտանգին մէջ չես գտնուիր: Իսկ մի՛ մոռնար, որ կարգ մը արգելաւած շրջաններ կրնան... կոյուղիներու ելքի վայրեր ըլլալ:

Իսկ եթէ ծովուն խորերը կը սուզուիս, մի՛ մոռնար, որ ծովուն գանձերը շատ գեղեցիկ են, սակայն նոյն ատեն շատ դիւրաբեկ: Դիտէ՛ առանց դպնալու:

ԳԻՏԵՒՐ ԹԷ

Ծովուն մէջ թափած աղբերը երկար ժամանակ կ'ապականեն ջուրերը:


- Թուղթ թաշկիմակ մը - 2 ամիս
- Ալիւմինիումի խմորի թիթղ մը - 100 տարի
- Կերպարկայն շիշ մը կամ տոպրակ մը - 100-500 տարի:

ԱՅԼԱԶԱՆ

ԻՆՉՈՒՒ ԼԻԻԹԷՍ ՓԱՐԻՉ ԴԱՐՉԱԻ

- ՓԱՐԻՉԻ ՅԵՂԱԽՈՒՄԻՆ ՊԱՏՃԱՆՈՎ

Փարիզի կոչուած գաղիացի ցեղախումբը քանի մը հիւղեր հաստատած էր Սէն գետին կղզիներէն մէկուն՝ ներկայի Սիթէյի կղզիին վրայ (Փարիզ մայրաքաղաքին կեդրոնը):



Լիւթէս երկար ժամանակ եղած է ձկնորսներու համեստ գիւղ մը: Երբ Յուլիոս Կեսար կը նուաճէ Լա Կոլ շրջանը, Լիւթէս կը վերածուի ամրացուած քաղաքի մը:

Իսկ երբ Ֆրանքները շրջան կը հասնին Երզ դարուն, այս գաղիական-հռոմէական քաղաքը կը կորսնցնէ իր անունը, եւ կ'որոգարէ հիմնադիր ցեղախումբին՝ Փարիզի անունը:

Ո՞Ր ԿՂԶԻՆ ԿՈՉՈՒԱԾ Է «ԱՍՏՈՒԱԾՆԵՐՈՒ ԿՂԶԻ»

- ՊԱՆԻ

«Աստուածներու կղզին» հիստու կրօնին կը պատկանի: Ան ինտոնեգրիական կղզիներու խումբին միակ կղզին է, որուն բնակիչները իսլամ չեն:

Պալիի վրայ կ'իշխէ Ակուսկ լեռնագագաթը, որ սուրբ հրաբուխ կը նկատուի կղզիին բնակիչներուն կողմէ: Պալի տեսակաւոր տօներ կը նշէ ամբողջ տարւան ընթացքին:

Աստուածներու պաշտամունքին նուիրուած տաճարներ անթիւ են այս գեղեցիկ ու բերրի կղզիին մէջ: Հոն, կիները իրենց օրերը կ'անցընեն ծաղիկներ հիւսելով՝ զանոնք իբրեւ նուէր տաճարներու մէջ դնելու համար:

Ո՞Ր ԳԵՏԸ ԿՈՉՈՒԱԾ Է «ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ՋՈՒՐԵՐԸ ՀԱՄԱՔՈՂ ԽՈՂՈՎԱԿԸ»

- ԿԱՆԺ ԳԵՏԸ

Ան դժբախտաբար ճանչցուած է իբրեւ չափազանցօրէն ապականած գետ մը: Մինչեւ 1993 մէկ միլիառ լիթր հեղուկ սղորտակալին կը թափէր անոր մէջ:



Մինչեւ 1980ական թուականներու սկիզբը, Կանժը կը նմանէր աղտոտ ջուրերը հաւաքող հսկայ խողովակի մը: Այս աղէտալի վիճակը բարելաւելու համար հնդիկ կառավարութիւնը սկսած է գետի մաքրութեան ընդարձակ ծրագիր մը ի գործ դնել:

ՔԱՆՈ՞ ԳՈՐԾՈՒ ՀՐԱՔՈՒՄ ԳՈՅՈՒԹԻՒՆ ՈՒՆԻ ԷՔՈՒԱՏՈՐԻ ՄԷՉ

- ՈՒԹ

Հարաւային Ամերիկայի երկիրներէն էջուատորի մէջ գոյութիւն ունին 35 կարեւոր հրաբուխներ: Անոնցմէ ութ հատը տակաւին յանկարծակիօրէն եւ ազդու կերպով կը ժայթքեն:

Անոնցմէ ամէնէն անհանդարտը Սանկէյն է: Ան անդադար ծուխ, լաւա եւ մոխիր կը թափէ:

Այս հրաբուխը նաեւ ամէնէն «խորհրդաւոր» է. ան միշտ ծածկուած է Ամազոնի անտառէն բարձրացող մշուշներով...

ՁԵՆԱՅԻՆ ԱՃԻԱՏԱՆՔ ԳՆԴԻԿՆԵՐՈՒ ԽԱՂԸ



Եթէ օր մը միմակո մնացիր, կը ձանձրանաս եւ չես գիտեր ինչ ընել, փորձէ խաղալ գնդիկներու այս խաղը, որ համբերութեան եւ ուշադրութեան կը կարօտի...

- Պէտք ունիս Պանիի խաւաքարտէ կլորակ տուփի մը, ջրաներկի, սուր ծայրով մկրատի, կլորակ պտտիկ ուղունքներու կամ գնդիկներու:
- 1) Ընտրէ պանիի տուփին կափարիչին եւ յատակին միջեւ այն բաժինը, որ աւելի տոկուն եւ շիտակ կը թուի քեզի:
 - 2) Յատակին վրայ գծէ ուզած պատկերը՝ նախատեսելով ուզածիդ չափ ծակերու տեղերը: Անոնք պէտք չէ գնդիկներէն աւելի մեծ ըլլան:
 - 3) Չափահասէ մը խնդրէ, որ մկրատին ծայրով այդ կէտերուն վրայ փոսիկ մը բանայ՝ ծայրը կլոր դարձընելով անոր մէջ: Սաւաքարտին ծակէն դուրս ելած բաժինները կտրէ:
 - 4) Յատակին վրայ գծած տեսարանը ջրաներկով ներկէ, ինչպէս նաեւ տուփին շրջանակը: Ձգէ, որ չորանայ:
 - 5) Պտտիկ գնդիկները կամ ուղունքները դիր տուփի կին մէջ: Սաղդ պատրաստ է: Սաղին նպատակն է բոլոր գնդիկները փոսիկներուն մէջ գետեղել:


Ժ Ա Մ Ա Ն Յ



Կրնա՞ս գտնել իւրաքանչիւր թզուկին համապատասխանող շուրջը:

	7
	8
	9

Գիտնալով, թէ իւրաքանչիւր նշան կը համապատասխանէ տարբեր վայրկեաններու ժամանակի մը, ո՞ր կենդանին ամենէն ուշ պիտի վերջացնէ վազը:



Կրնա՞ս գտնել 2 պատկերներուն միջեւ գոյութիւն ունեցող 7 տարբերութիւնները:

Պատրաստեց՝ ՇՈՂԻԿ ՏԵՐ ՂՈՒԿԱՍԵԱՆ

«ԱԶԳԱԿ»-ի ՀԵՌԱԶԱՅՆԻ ԹԻԻԵՐԸ

«ԱԶԳԱԿ»-ի հետ կապուելու համար հեռաձայնել հետեւեալ թիւերուն - 258526, 260115 եւ 241274:

ԱՐԵՒՈՒՆ ՊԷՍ ԴԵՂԻՆ



Դեղին գոյնը խորհրդանշիւ է լոյսին: Սակայն գիտի՞ր նաեւ, թէ ան երկար ժամանակ եղած է նաեւ խենթութեան գոյնը:

Պատկերներուն գծաքրութիւններուն վրայ, գրեթէ միշտ տան սուր տանիքին վրայ կը փայլի... դեղին արեւ մը: Դեղինը նախ եւ առաջ լոյսին, արեւուն եւ արծաթալուրջներուն գոյնն է: Ան գոյնն է բոլոր փայլող եւ լաւ տեսնուող երեւոյթներուն: Վստահաբար նշմարած ես, թէ դեղինով կը ներկուի ամէն ինչ որ լաւ պէտք է տեսնուի. թեմիսի գնդակները, ճամբաները աշխատող գործաւորները... քաղաքին մէջ պտտած ատեն, ուշադրութեամբ դիտէ շուրջը, եւ պիտի նշմարես, թէ դեղինը ուշադրութիւնդ անմիջապէս կը գրաւէ: Այս պատճառով ալ, դեղինը եւ ինչ «գարմիկ»ը ֆիլիսոփայութեան կը գործածուին, օրինակ՝ ծանուցումներուն մէջ:

Սակայն, դեղինը գոյնն է նաեւ հարստութեան: Ասիկա բնական երեւոյթ է, որովհետեւ անոր երանգը շատ մօտ է ոսկեգոյնին:

Դեղին ցորենի հասկն ալ երկար ժամանակ բարգաւաճումը խորհրդանշած է. դիւղերուն մէջ, ցորեն ունեցող գիւղացին միշտ տնտեսական գետնի վրայ ապահով եղած է: Դեղինը գոյնն է նաեւ զօրաւոր անձերու եւ «լալթողներուն»:

Չինաստանի մէջ դեղինը կայսեր գոյնն է, իսկ հնդկի մրցումին ամէնէն լաւ մարզիկը կը հազնի դեղին շապիկ:

Սակայն, դեղինը ունի նաեւ ուրիշ երես մը: Երկար ժամանակ ան եղած է խենթութեան եւ ընկերութեանէն դուրս ձգուած անձերուն գոյնը, իսկ միջին դարերուն, դեղինը դաւաճաններուն գոյնն էր. մարդիկ անոնց տունները դեղին կը ներկէին՝ զանոնք մատնելու համար:

Orientplus... Farna \$319... Other Destinations... \$190 \$425... 01.900598, 901598...

ԿՐԻԿՐԱ ՄԱՆԿԱԿԱՆ ՄԱՏԵՆԱՇԱՐԷՆ 6 ՆՈՐ ԳԻՐՔԵՐ

«ԱԶԳԱԿ»Ի ՄԵԶ ԾԱՆՈՒՑՈՒՄԻ ՀԱՄԱՐ
Բոլոր անոնք, որոնք կը փափաքին «Ազգակ»ի մէջ...

ՍԱԿԱՐԱՆ
Պէլյուրոսի սակարահին մէջ օտար դրամահնչներու փակման սակագները հետեւեալներն էին երէկ...

ՈՍԿԻ
Անգլիական մէկ ոսկի 142,000 - 147,000 լ.ն.
Իրանեան մէկ ոսկի 127,500 - 132,500 լ.ն.

ՀՈԳԵՀԱՆԳԻՍ

ԳԵՈՐԳ ԱՐԱՊԵԱՆԻ մահուան Ա. տարելիցին առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 10 Օգոստոս 2003, Անթիլիասի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր տաճարին մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ԽԱՉԲԱՌ ԹԻԻ 5509 Պատրաստեց՝ Տ.Ս. ԱՐԱՋԱՐԵԱՆ

1 2 3 4 5 6 7 8 9 10 11
1
2
3
4
5
6
7
8
9
10
11

- 1. Չորաթուզ - Հայրապետական գաւազան:
2. Աղաչանք առ Աստուած - Եւրոպական ոստան:
3. Տարբերուի - Նոյն գիրերը:

ԹԻԻ 5508
ԽԱՉԲԱՌԻՆ
ԼՈՒԹՈՒՄԸ

ՕՐԱՏԵՏՐ
ՓԱՌԱՍՕՆ / ՅՈՒՅԱՀԱՆԳԷՄ / ԶԲՕՍԱՇՐՉՈՒԹԻՆ

ԵՌՆԿՈՍԼԱՒ ԵՐԱԺԻՇՏ ԿՈՐԱՆ
ՊՐԵԿՈՎԻԶ ԵՒ ԻՐ ՆՈՒԱԳԱՆՈՒՄԲԸ
ՊԵՅԹԵՏՏԻՆԻ ՄԵԶ
Պէյթետտիի Միջազգային փառատունիս այս տարուան յայտագիրները կը ձուռնան իրենց աւարտին:

ԱՅՍՕՐ
- Պատվէրի փառատուն. Պիգի «Քարմեն» օփերայի ելոյթ, ժամը 20:00ին, Ժուլիանի տաճար:
- Պէյթետտիի փառատուն. Կորան Պրեկովիչի ելոյթը, ժամը 20:30ին:

ԱԶԳԱԿ 50 ՏՄԱՐԻ ԱՌԱՋ 9 ՕԳՈՍՏՈՍ 1953

ՄԵՐ ՏԵՍԱԿՑՈՒԹԻՆԸ ՄԵԾԱՆՈՒՆ ԼՐԱԳՈՐԴԻ ՍԸ ՇԵՏ
ՊՈՒՒՆՈՍ ԱՅՐԷՍԻ «ՏԵՄՈԿՐԱՍԻԱ» ԹԵՐԹԻՆ
ՏՆՕՐԷՆԸ ԿԸ ԳՈՎԷ ԱՐԺԱՆԹԻՆԻ ՀԱՅԵՐԸ

Արժանքների լրագրողներու պատկերակրեան նախագահ եւ Պուստոս Այրէսի մեծագոյն օրաթերթերէն «Տեմոկրատի» տնօրէն Ամբրիջ Պարիսի հետ «Ներսիսի» պանդոկի մէջ կարեւոր տեսակցութիւն մը ունեցանք «Ազգակ»ի անունով:


Ամբրիջ Պարիսի նախագահած պատկերակրեանը, զօր. Նեկիպի հրաւերով, այցելեց Երկրորդ, ուր օտար լրագրողներու կարգին ներկայ գտնուեցաւ Յուլիանի Յեղափոխութեան օտակարարութեան առաջին տարեդարձին: Պարիս այս առթիւ զօր. Նեկիպի յանձնեց զօր. Փերոնի անունով «Արժանքների» բարեկամութեան» շքանշանը, որուն շատ քիչեր միայն կ'արժանանան:

ՆՈՅՆ ԿՐԱՆԻ ԱՍՏՂԵՐԸ

ՆՈՅ (21 Մարտէն 20 Ապրիլ)
Անցեալ շաբաթ ունեցած էիք քիչ մը դժուարին պահեր, զորս մոռցած ըլլալ կը բռնէ: Հանգստանալու համար առիթներ ստեղծեցէք: Ամբողջ այս եղանակին կրնաք հանգչիլ ձովափին կամ լեռնային շրջանի մը մէջ:
ՅՈՒԼ (21 Ապրիլէն 21 Մայիս)
Կարգ մը «Յուլի»ու համար հնչած է ժամը եւս մտորողներ, որուն արժանի էք: Օգտուեցէք այս աղուր առիթէն, որպէսզի վերստուցաբեր ձեր կորովը եւ խանդը:

ՄՈՒՆԻՑԸ (21 Յունուարէն 19 Փետրուար)
Ձեր տրամադրութիւնը այնքան ալ լաւ չէ այսօր, եւ ձեր հարազատներուն կամ բարեկամներուն հետ պիտի ըլլաք անհարգող: Անոնց ներողամտութիւնը հայցեցէք: Այսօր կանուխ անկողին մտքը, որպէսզի ձեր շինքը հանդարտի:

Մ Ա Ր Զ Ա Կ Ա Ն - Ա Շ Խ Ա Ր Կ



ԹԵՆԻՍ

ՆԱԼՊԱՆՏԵԱՆ ԵՒ ԱԿԱՍԻ՝ ՅԱՂԹԱԿԱՆ


Մոնթեալի մէջ (Քանադա) տեղի ունեցող տղոց թենիսի միջազգային մրցաշարքին Գ. Հանգրուանի իր կատարած մրցումին, երէկ արժանութիւնաւոր Դաւիթ Նալպանտեան յաղթանակ մը արձանագրեց, երբ 6 - 4 եւ 7 - 6 արդիւնքով պարտութեան մատնեց Քարոլ Պէթը (Սլովակիա):

Իր կարգին թիւ 1 դասուած ամերիկացի Անտոն Ակասի յաղթանակ մը արձանագրեց 6 - 4 եւ 6 - 2 արդիւնքով պարտութեան մատնելով քանադացի Սեպասթիան Լարոսը:

Գ. Հանգրուանի մրցումներուն մեծագոյն պարտեալը Հանգրուանեաց 2րդ դասուած սպանացի իսուան Քարլոս Ֆերերո, որ 6 - 3 եւ 7 - 5 արդիւնքով պարտութիւն մը կրեց Քարոլ Քուչեթայէն (Սլովակիա):

Ստորեւ՝ Գ. Հանգրուանին արձանագրուած մնացեալ կարեւորագոյն մրցումներուն արդիւնքները.
Ռոմէ Ֆետերեր (Չեխիոյէրիա, 3րդ) - Թոմի Ռոպրեսո (Սլովակիա, 16րդ) 6 - 4 եւ 6 - 3
Էնի Ռոպրեսո (Սլովակիա, 16րդ) - Սեպասթիան Կրոտան (Յորանսա, 9րդ) 6 - 3 եւ 6 - 3
Ռայնըր Եուսթի (Գերմանիա, 8րդ) - Երիկ Նովաք (Չեխիա, 10րդ) 7 - 5 եւ 6 - 0

ՖԷԼՓՍ ԵՒ ՓԵՇՈՆՔԻՆԱ ԱՇԽԱՐՀԻ ՆՈՐ ՄՐՅԱՆԻՇՆԵՐ ՀԱՍՏԱՏԵՑԻՆ



Մայքըլ Ֆելփս

Միացեալ Նահանգներու մէջ տեղի ունեցող լողարշաւի ախոյեանութեան մրցումներուն, ամերիկացի Մայքըլ Ֆելփս երէկ աշխարհի նոր մրցանիշ մը հաստատեց, երբ 200 մետր ազատ լողի մրցումներուն արձանագրեց 1 վայրկեան 45" 99 արդիւնք մը: Նախկին մրցանիշը եւս կը պատկանէր ամերիկացի Յոնի Եսթրին 23ին Պարսելոնայի մէջ տեղի ունեցած աշխարհի ախոյեանութեան մրցումներուն արձանագրեց՝ 1' 46" 60 արդիւնք մը:

● **ՌՈՒՍԻՈՅ** մէջ տեղի ունեցող աթլետիկայի ախոյեանութեան մրցումներուն, երէկ ուսուցիչ Փելլոնի քինա աղջկանց 400 մետր արագելարշաւի մրցումներուն աշխարհի նոր մրցանիշ մը հաստատեց, արձանագրելով՝ 52" 34 արդիւնք մը: Նախկին մրցանիշը կը պատկանէր ամերիկացի Քիմ Պէթլինի (52" 61):

ՔՈՒ ՄԻԱՅԱՒ ԶԵԼՄԻԻ

Անգլիացի միջազգային միջնապահ Զո Բոլ, բժշկական քննութիւններու ենթարկուելէ ետք 2 Զելսիի պատասխանատուներուն հետ, լքեց իր պարտականութիւնը Ռեյնս չամբ եւ փոխան 10,5 միլիոն ամերիկեան տոլարի միացաւ լոնտոնեան կապիտալ Չելսիի: 21 տարեկան Զելսի իր փոխանցումէն ետք, պիտի ունենայ Տեյն Սաթթ, Տեյնսի, Ուէյն Պրիմ, Կլէյ ճոնսըն եւ Սուան Սեպասթիան Վերնը, որոնք վերջերս միացան Չելսիին:

Զո Բոլ
28 տարեկան Մաքայ այսօր դաշտ չեքիկայանայ: Ըստ հաւաստի աղբիւրներու, ան առաջին անգամ ըլլալով Պայէրնի շապիկը պիտի կրէ յառաջիկայ Երեքշաբթի օր (Օգոստոս 12ին), Նիւրեմպէրկի դէմ տեղի ունենալիք ֆուտբոլի

«ԲՈՍԻՆԻՅԻ ՇԻՒՏ»-Ի ՄՐՅՈՒՄԻՆ

ԿԱՂԸ ՄԱՆՉԵՍԹԸՐ ԵՈՒՆԱՅԹԸՏ ԿԸ ՃԱԿԱՏԻ ԱՐՍԵՆԱԼԻ ԴԵՍ

Անգլիոյ ֆուտբոլի բարձրագոյն դասակարգի ախոյեանութեան 2003-2004 եղանակի ապրիլնախնի շաբաթ մը առաջ տեղի ունեցող բացման մրցումը, որ կը ճանչցուի իբրեւ «Բոսինիոյ Շիւտ» անունով, վաղը՝ Կիրակի օր, իրարու դէմ պիտի հանէ Մանչեսթըր Եունայթըդը եւ Արսենալը:

Մրցումը վստահաբար, որ պիտի ըլլայ բաւական հետաքրքրական, սակայն անիկա աւելի ուշադրութեան արժանի պիտի ըլլայ այն իմաստով, որ վերջին անգամ անցեալ Ապրիլին Արսենալի շապիկը կրած խմբապետ Փաթրիք Վիլյամս առաջին անգամ ըլլալով դաշտ պիտի ներկայանայ (նախապէս վիրաւոր ըլլալով): Այժմ բաւական ապաքինած ըլլալով, Վիլյամս սակայն ցարդ իր պայմանագրութիւնը չէ երկարաձգած:

ՍՓՈՐԹԻՆԿ ԼԻԶՊՈՆ - ՄԱՆՉԵՍԹԸՐ ԵՈՒՆԱՅԹԸՏ՝ 3-1

Լիզպոնի մէջ (Փորթուգալ) կայացած ֆուտբոլի բարեկամական մրցումի մը ընթացքին, Սփորթինկ Լիզպոն 3-1 արդիւնքով ծանր պարտութեան մատնեց իր հօրը՝ Մանչեսթըր Եունայթըդը, որ տակաւին անցեալ շաբաթավերջին Միացեալ Նահանգներ շրջապտոյտ մը յաջողութեամբ պսակած էր, իր կատարած շոր մրցումներուն ալ յաղթանակներ արձանագրելով: Նշենք, որ վերոնշեալ մրցումը նաեւ բացուած եղաւ Սփորթինկ Լիզպոնի նոր դաշտին, որ պիտի հիւրընկալէ Եւրո - 2004ի ֆուտբոլի մրցաշարքին կարգ մը մրցումները:

Մանչեսթըրի մարզիչ Ալեքս Ֆերըլըն թէեւ հիմնական կազմին հետ դաշտ ներկայացուց Նիքի Պայթը եւ Փոլ Սքոլըր, սակայն իր բարեկամական մարզիկներ նկատի առաւ Ռոյ Բիննը եւ Ռուտ Վան Նիսթըլը: Ան նախընտրեց դաշտ ներկայացնել Երիտասարդ եւ նորեկ մարզիկներ, որոնց կարգին՝ Մարք Լինչ եւ Տէրըն Ֆլէչըր:



Ժոաո Փինթո

Էրիք Ճեմպա - Ճեմպա եւ պրազիլցի Բիլիպարսը պիտի չզգացնեն Վերոնի եւ Տէլլիո Պեթամի բացակայութիւնը: Ֆերըլըն եզրափակեց իր խոսքը՝ որ մտադիր է իր կազմին միացնել նաեւ թունիցի շաբթի Ռայսը (Ալաբա Ամսթերտամէն) եւ Բարլոս Փիլյոլը (Պարսելոնայէն):

ՊՈՒՆՏԵՍԼԻԿԱ

ԱՅՍՕՐ՝ ՊԱՅԷՐՆ - ՀԱՆՈՎԸՐ ՀԵՏԱՔՐՔՐԱԿԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ

Գերմանիոյ ֆուտբոլի ախոյեանութեան (Պուներսլիկա) 2րդ հանգրուանի մրցումներուն, Գերմանիոյ ախոյեան Պայէրն Միւնխի դժուար մրցում մը ունի կատարելիք, երբ այցելէ Հանովըր - 96ի դաշտը: Դժուար այն իմաստով, որ մարզիչ Ռայֆ Ռէնկիլիքի կան երեք կազմերէն մէկը, որ անցեալ եղանակին Պայէրն Միւնխի չէր պարտութիւն չկրեց (երկու մրցումներն ալ վերջ գտա՛հ հաւասարութեամբ 2-2 եւ 3-3):

Երկու խումբերն ալ եղանակի բացման իրենց կատարած առաջին մրցումին յաղթանակներ արձանագրեցին: Պայէրն իր դաշտին վրայ 3-1 արդիւնքով պարտութեան մատնեց Շեֆֆիլդ Յիւնիթը, մինչ Հանովըր - 96 3-0 արդիւնքով յաղթանակ վերագրեց Համպտըրի դաշտին: Թէեւ Պայէրնէն պիտի բացակային Ալեքսանտր Յիլըր եւ Ռոբէ Մանթա Քրուզ (վիրաւոր), սակայն բոլորին աչքերու շրջանէն պիտի ըլլան նորեկ մարզիկ Ռոյ Մաքայի վրայ, որ երէկ ի վերջոյ ամբողջապէս Տեֆֆորթի Բորուսիայէն Պայէրն իր փոխանցումը, փոխան 18,5 միլիոն եւրոյով:

Հաւանաբար, սակայն, 28 տարեկան Մաքայ այսօր դաշտ չեքիկայանայ: Ըստ հաւաստի աղբիւրներու, ան առաջին անգամ ըլլալով Պայէրնի շապիկը պիտի կրէ յառաջիկայ Երեքշաբթի օր (Օգոստոս 12ին), Նիւրեմպէրկի դէմ տեղի ունենալիք ֆուտբոլի

● **ՆՇԵՆՔ**, թէ Բայրըր սլուցիւնը - Վերտըր Պրեմըր մրցումը յետաձգուեցաւ յառաջիկայ 16 Օգոստոսին:

ՍԿՈՎՏԻՈՅ ՖՈՒԹՊՈՒԼԻ ԱՆՈՅԵԱՆՈՒԹԻՆ

ԱՅՍՕՐ ԿԸ ՍԿՍԻ 2003 - 2004 ԵՂԱՆԱԿԸ

Սկովտիոյ ֆուտբոլի ախոյեանութեան 2003 - 2004 եղանակի առաջին հանգրուանի մրցումներուն, որոնք կը սկսին այսօր՝ Շաբաթ, ախոյեան Ռէյնսը կը առաջին մրցումը կը կատարէ Քիլմառնոքի դէմ:

Կարգ մը երկիրներու պարագային, ընդհանրապէս եղանակի բացման մրցումը կը կատարէ ախոյեան իւր մը: Տարբեր պարագային սակայն Սկովտիոյ, նկատի ունենալով, որ բացման մրցումին օրը, միեւնոյն ժամուկ տեղի պիտի ունենան երկու մրցումներ, մինչ մնացեալ շաբաթ տեղի պիտի ունենան այդ երկու մրցումներէն ետք:

Ստորեւ՝ առաջին հանգրուանի մրցումներուն յայտագիրը (ժամերը՝ Պէյրուի ժամանակացոյցով):

	ԺԱՄ
Տանֆըրմայն - Սելթիք	14:30ին
Ռէյնսըրկ - Քիլմառնոք	14:30ին
Տանտի Եունայթըտ - Հիպերնիլ	17:00ին
Հարթ - Ալբրտին	17:00ին
Մալորուէլ - Տանտի	17:00ին
Փարթիք - Լիվինկուք	17:00ին

ՖՈՐՄԱՆԻՍ 1

ԲԱՆԱՏԱՅԻ ԿՐԱՆ ՓՐԻՆ ՆԿԱՏԻ ՉՍՈՆՈՒԻՐ 2004 ԵՂԱՆԱԿԻՆ

Ֆորմիլա 1ի պատասխանատուները երէկ յայտնեցին, թէ 2004 եղանակի ախոյեանութեան մրցումներուն յայտագիրէն դուրս դրուեցաւ Քանադացի կրան փրին, որ 1977էն ի վեր միշտ ալ ներկայ եղած է եւ կը ճանչցուի իբրեւ ժիլ Վիլլիմէյով վազքուղի անունով: Նշենք, թէ յառաջիկայ եղանակին տեղի ունենալիք 2004ի ախոյեանութեան յայտագիրին վրայ դարձեալ պիտի դուրս Պել-ճիքայի կրան փրին:

Առիթը յարմար նկատելով, Չինաստան եւ Պահարէն անմիջապէս իրենց թեկնածուութիւնը դրին վազքուղի մը հիւրընկալելու համար, մինչ իրենց թեկնածուութիւնը կ'ուզեն դնել նաեւ՝ Ռուսիա, Հնդկաստան, Եգիպտոս, Մեքսիքա եւ Թուրքիա:

Նշենք, թէ Քանադացի այս եղանակի կրան փրին, որ տեղի ունեցաւ անցեալ 15 Յունիսին, վերջ գտաւ գերմանացի Միքայէլ Շումպերի յաղթանակով:

ԷՆ. ՊԻ. ԷՅ. Ի ԱՂԶԿԱՆՑ ՆՈՐ ՄՐՅԱՆԻՇ

Էն. Պի. Էյ. Ի աղջկանց պատմութիւնը ախոյեանութեան մէջ աւստրալիացի Լորըն Ճէքսըն նոր մրցանիշ մը հաստատեց, երբ իր ակումբին՝ Սիթի Քլիբի հետ նշանակեց 17 երկու կէտոց կողովներ (34 կէտ), որուն ընթացքին իր կազմը 92 - 56 արդիւնքով պարտութեան մատնեց Լոս Անճելըսը:



Լորըն Ճէքսըն

Նախկին մրցանիշը կը պատկանէր Հիւսթընի մարզիկ Սիմոնա Քուլիբրի, որ 1997ին Շարլոթի դէմ տեղի ունեցած մրցումին նշանակեց 15 երկու կէտոց կողովներ (30 կէտ):

ՖՈՒԹՊՈՒԼԻ ԲԱՐԵԿԱՍԱԿԱՆ ՄՐՅՈՒՄ

ՀՈՆԿ ՔՈՆԿ - ՌԷԱԼ ՄԱՏՐԻՏ՝ 2 - 4

Ասիական երկիրներ չլրացուող շարունակելով, Սպանիոյ ախոյեան Ռէալ Մատրիտ, այս անգամ ֆուտբոլի բարեկամական մրցում մը կատարեց Հոնկ Բոնկի դէմ, այս անգամ արձանագրելով 4 - 2 արդիւնքով յաղթանակ մը:

Քանադացի հազար համակիրներու ներկայութեան մրցումին վեց կողերն ալ նշանակուեցան Ա. Կիսախալին: Փորթուգալցի Լուիս Ֆիլիպո (7րդ փնէթիլով), պրագիցի Ռոնալտո (13րդ եւ 34րդ) եւ սպանացի Ռուրկ Կոնզալէս (35րդ) նշանակեցին սպանական կազմին կողմը, իսկ Ռուանկ ֓ենկ (29րդ) եւ Լի Եաօ (45րդ)՝ Հոնկ Բոնկի կողմը:

Բ. Կիսախալին, Ռէալ Մատրիտ իր շատ մը «աստղերը» փոխարինեց պահեստի այլ մարզիկներով, յատկապէս գոհ մնալով մրցումին արդիւնքէն:

Չինաստանի մէջ իր կատարած այս մրցումէն ետք, այժմ Ռէալ Մատրիտ ուղղուեցաւ Թայլանտ, Պանթրի մէջ վաղը՝ Կիրակի, շրջապտոյտի իր շորորդը մրցումը կատարելու համար Թայլանտի դէմ:

ՄԵԶԱԿԵ Կ՝ԱՊԱՔԻՆԻ

Քամերունցի միջազգային միջնապահ Վալերի Մեյակէ, որ անցեալ շաբաթավերջին ենթարկուեցաւ զիտու վիրաբուժութեան, շաբաթ մը եւս պիտի մնայ հիւանդանոց, յայտնեցին անոր ակումբին՝ Մոնփելիէի պատասխանատուները:

19 տարեկան Մեյակէ անցեալ շաբաթ ունեցաւ ինքնաշարժի արկած մը, ժանտորէն վնասելով իր գլուխը: Շաբաթ մը ետք, երբ ան դուրս գայ հիւանդանոցէն, տակաւին պէտք պիտի ունենայ բժշկական յատուկ խնամքի, լաւապէս ապաքինելու համար:

BEACH PARTY-Ի, ՏԱՐԵԳԱՐՁԻ, ՀԱՒԱՔԱԿԱՆ ԽՆՃՈՑՔՆԵՐՈՒ, ՀԱՐՍԱՆԵԿԱՆ ՀԱՒԱՔՈՑԹՆԵՐՈՒ ՆԱԵՒ ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ՌԻՐԱՆ ԱՌԻԹՆԵՐՈՒ ՀԱՒԱԳՈՅ ԿԱՅՐԸ

WATER GATE

WATER GATE: Յատուկ գիներ հայ յաճախորդներուն:

Մանրամասնութեան համար դիմել՝ ընդ. պատասխանատու ՊՐ. ՍԱԼԱՄ ՊՈՒԹՐՈՒՅԻ, ամէն օր առաւօտեան ժամը 10:00ին երեկոյեան ժամը 10:00ը: Հեռ.: 04-542706/7/8 եւ 03-617674

